ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«10» օգոստոսի 2024 թ. № 802 - Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N204-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N702-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով՝ հարկային ու մաքսային վարչարարության բարեփոխումներին աջակցելու և հարկային ու մաքսային վարչարարության հարցերով պետության, գործարար համայնքի ու հասարակական հատվածի միջև արդյունավետ երկխոսություն ապահովելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի հոկտեմբերի 20-ի «Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհուրդ ստեղծելու մասին» N204-Ա հրամանի՝

1) նախաբանում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի

կանոնադրության 18-րդ կետի 12-րդ ենթակետով՝» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N702-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով՝» բառերով.

2) 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

8/10/2021

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի նախագահի
2021 թվականի օգոստոսի 10-ի
N 802 - Ա հրամանի

«Հավելված
Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2006 թվականի հոկտեմբերի 20-ի N204-Ա հրամանի

ԿԱԶՄ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ (խորհրդի նախագահ)
2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ
3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալներ
4. «Հարկ վճարողների պաշտպանություն» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)
5. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
6. Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
7. Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիայի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
8. Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
9. Հայաստանի բանկերի միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
10. Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)

11. Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
12. Հայաստանում Ամերիկայի առևտրի պալատի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
13. «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
14. Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
15. ՀՀ ռազմավարական ծրագրերի քաղաքացիական համագործակցության ցանց, «Այլընտրանք» հետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
16. ՎՋԵԲ Գործարար աջակցության գրասենյակի ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
17. Եվրոպական բիզնես ասոցիացիայի ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
18. «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
19. «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
20. «ՓրայսուոթերհաուսԿուպերս Սենթրալ Այժա ընդ Կովկասիս Բի. Վի.» ընկերության հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
21. «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
22. Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
23. Արժույթի միջազգային հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
24. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
25. ՀՀ հանրային խորհրդի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
26. «Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)

27. Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
28. «Աուդիտորներ Պալատ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
29. «Տոնավաճառներ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
30. «Համագործակցության նոր ուղի-կիրթ գործարար» կրթական և գործարար կապերի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
31. «Համերաշխություն» փոքր և միջին ձեռներեցների շահերի պաշտպանություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
32. «Չոր մարքեթինգ» ներդրումային հիմնադրամի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
33. «Իրազեկ հարկատու» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
34. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ներկայացուցիչ (համաձայնությամբ)»: